



#### 86. ԲԱՆՏՆ ՈՒ ՉԱՐԸ

Մի թագավոր մի խելոք ջահել տղի վեր ա ունում պահում, վեր իրան շիբուխը լցնի, կրակ բերի կպցնի: Էս տղեն էնքան լսող ու խելոք ա ըլմ, վեր թագավորը իրան հարազատ աղի պես սիրում ա:

Մի օր սա գլուխը դրել ա էս աղի ծնգանը ու քնել, հենց էգ հատաղին Բախտն ու Չարը գալիս են ըտի ու տղի աչքին ըրնում են: Սհանք սրկսում են իրար հետ վիճիլը:

Բախտը ասում ա.— Ծս պտք ա սրան բախտ տամ:

Չարը ասում ա.— Չէ, ես պետք ա դրան թագավոր դարձնեմ:

Բախտը նեղանում ա, թողում ա, վեր գնա, տղեն աղլուխը գցում ա, վեր դրան բռնի, համա Բախտը փախչում ա ու աղլուխը ընգնում ա թագավորի շիխքը, թագավորը ձեռաց զարթնում ա, տենում ա աղլուխը իրան շիխքին, տղեն էլ էրկու տտիցը բռնած սառած մնացել ա:

Ասում ա.— Հը՛, ի՞նչ ես անում, դու ուզիր ինձ քնած տեղը խեղդես, վեր իմ տեղը դու թագավոր դառնա՛ս:

Ձեռաց կանչմ ա ջանլաթներին տալի, ասում ա.— Տարե՛ք սրա գլուխը կտրեցեք:

Էս ջանլաթնին էգ տղին տանում են մի ձորի միջի բրախում:

ասում են.— Մենք քու հոր հացը շատ ենք կերե, վրե՛նց քու ըրնի տակը ընգնենք, գնա քու արևի ձենը ածա:

Մի նապաստակ են սըպանում, սըրա շորերը ըրնոտ են անում ու տանում թագավորին շհանց տալի: Տղեն գլուխը առնում գնում ա, ըստիան, ընգիան հաց ուզում, մի օր կուշտ, մի օր սոված, մի օր ըստի, մի օր ընգի գլուխ ա պահում:

Մի օր էլ մի գուռն ա թակում, սրան մի կտոր հաց են տալի, սա հացը ձեռին դհանց դռնովն անց կենալիս, դրանց բնատենը՝ սնին փթաթված ա ըլմ, օձ ա դառնմ կորչում:

Տանտերը հենց գիդի, թե էս տղեն ա գողացել, հասնում են եղնեն, տենում են ձեռին զադ չկա, թող են անում գալի:

Ըստիան սա գնում ա մի գեզ, մի հարուստի տան շորան ա դառնում: Պայման են անում, ասում ա.— Ինչքան էգ ծնի՝ ինձ, վեոց ծնի՝ քեզ:

էդ խեղճ տղի բախտիցը չիմ վեոց են ծնում: էքսի տարին էլ տղեն ասում ա.— Լավ, էս տարի էլ ինչքան վեոց ծնի՝ ինձ, էզը՝ քեզ:

էդ տարին էլ չիմ էգ են ծնվում, ու սհենց էլ էս խեղճ տղեն էրկու տարի դրա մհար շորանութին ա անում ձրի, մի զադ էլ սա ըստանում չի, սա թողում ա գնում:

Հարուստը ասում ա.— Տղա, արի վացցուն վելխար տամ, տար ապրի:

Սա վեր չի ունում, ասում ա.— Պետքը չի:

Գնում ա մի տեղ, տենում ա մի մենձ ջաղաց:

Ջաղացի տերը ասում ա.— Տղա, վեց քար ունեմ, արի բնցրու, վեց քարիցը վերը ուզում ես քեզ, մհատ վե կալ հինգը ինձ:

Սա ջոկում ա, լավ քարը վեր ունում ու ջղացը աշխատացնում: էքսի օրը տենում ա իրան քարը աշխատում չի: Տհենց էլ խափան մնում ա, դրա մհար աշխատում ա:

Մի օր էլ սա ջղացի դռանը նստած ամտածում ա, մըհել տենում ա հրես Բախտն ու Չարը էկան սրա աշկին ըրեացին:

Բախտը Չարին ասում ա.— Դու էս մարգին ջղացպան շինեցիր, սա էս թողումն ու կեղտումը կմահանա: Ծս թող չեմ անիլ, կտիրանամ դրան ու թագավեր կդարձնեմ:

Տղեն փորձում ա, ասում ա.— Տենամ դուզ կլի, բախտն էկավ թե չէ:

<sup>1</sup> Շղթան—Մ. Բ.:

Տանըմ ա էդ խափան քարի վրա ցորենն ա ածըմ, տենըմ ա քարը աջխատըմ ա:

Գնըմ ա խաղեխինն ասըմ ա.— Արի քու շաղացին տեր կաղ- նի, ես դնըմ եմ:

Տղեն թողնըմ ա դալի ընդի, որդի շորան ա ըլիլ:

Խաղեխինը ասըմ ա.— Այ տղա, բա էրկու տարի վեչխարս պհեցիր, խի՞ չի մի վացցուն վեչխար էլ ա տանիր:

Ասըմ ա.— Տարել ի մնալ շտեր:

Ասըմ ա.— Խի՞:

Ասըմ ա.— Նրա մհար վեր բախտ չի ունի:

Ըտիան դալիս ա էն բնատենի տիրոնջ տուն:

էն բնատենը դալիս ա իրան տեղը, տերը ասըմ ա.— Այ տղա, ինչ դու գնացել իր, մեր բնատենը կորել էր, հենց դու եկար, նա էլ եկավ, էս ի՞նչ բան ա:

Տղեն ասըմ ա.— Էն վեր ես եկա ձեր տուն, նա օձ դառավ, եր- գինք բցրացավ:

Ասըմ ա.— Բա խի՞ չի էն վախտը ասիր:

Ասըմ ա.— էն վախտը բախտ չունի, ասել էի, հավատալ չիր:

Ըստիան գալիս ա իրան թագավերի քաղաքը, տենըմ ա մի շուք վարող, ասըմ ա.— Հայրիկ, ինձ վի վալ շուք վարող:

Ասըմ ա.— Ա՛ տղա ջան, արի դու վարի, ես գնամ եգնանց մհար ալափ ճարեմ:

էդ տղեն մի քիչ վարըմ ա, մհել տենըմ ա քարեր կա թափած, քարերը դեն ա ածըմ, վեր ըտի էլ վարի, մի մեծ քար ա բցրցնըմ տենըմ ա հրես մի գուգուս վեսկի էդ քարի տակին:

Սա էդ վեսկին բերըմ ա հերացվի տուն, ասըմ ա.— Մի լուծ հզն էլ առ:

էդ մարդը մի լուծ հզն էլ ա առնըմ, շատ բան էլ:

Դհանք էնքան հարստանըմ են, որ էլ ասիլու չի:

էդ օրերին մի թագավեր էդ թագավերիցը ուժեղ հրաման ա գրգըմ, ասըմ ա.— Կամ օդըմը տներ կշինես, կամ քեզ վրա կռիվ եմ գալի:

էս թագավերը իրան երգրի իմաստուններին կանչըմ ա, ասըմ ա.— Բա ի՞նչ անենք, կարա՞նք նրանց հրամանը կատարենք:

Դրանք շատ են մտածըմ, բան չի դուս գալի:

Թագավերը ասըմ ա.— Հեյ գիտի Չիբուխի, վե՞րդի ես. դուս արի, մեզ էս նեղ տեղիցը ազատի: Մհել մտածըմ ա, մտածըմ, կանչըմ ա էն ջանլաթներին, ասըմ ա.— Դուզը ասացեք, Չիբուխ- շուն սպանել եք, թե՛ չէ:

Ասում են.— Մենք նրա հոր հացը շատ ենք կերել, վենց մեր ձեռք վրա կգեր նրան սպանենք: Տարանք քուրմը րաց թողինք:

Թագավերը իմաստուններին կանչում ա, ասում ա.— Չիբուխչին սաղ ա, վե՞նց անենք վեր նրան գտնենք:

Իմաստուններից մինը ասում ա.— Տունը մի վեչխար տու, ով մի ամիս կպահի, ինչ քաշով կտանի, էն քաշով էլ եդ բերի, իմացի, վեր Չիբուխչին նրա տանն ա:

Թագավերը տունը մի վեչխար ա տալի, ասում ա.— Ով կտանի կըպահի, իրա քաշովը եդ կբերի, իրա քաշովը մին վեսկի կտամ:

Տունը մի վեչխար են տանում, Չիբուխչին հերացվին ասում ա.— Գնա մի վեչխար էլ դու րի պահենք:

էս մարդը գալիս ա մի վեչխար էլ ինքն ա բերում, օրեկան շաղացնում ա ու գելը բերում դաքին կապում, էդ քշերը մըշև լիսը վեչխարը կողքին մնում ա: Ռավեղը քաշում ա տենում լղարել ա, էլի բերած օրվա քաշն ա: Աս տհե շաղացնում լղարացնում ա մինչև ամիսը թմամի:

Հորը ասում ա.— Դե տար տու թագավերին, ըլեդ քու բերած քաշն ա:

էդ մարդը բերում ա տալիս ա թագավերին:

Թագավերը ասում ա.— էս վե՞նց արի:

Ասում ա.— Ինձ մի ջահել տղա ունեմ, նա արավ:

Ասում ա.— Հլա էն տղին բի ըստի:

էդ մարդը դալիս ա էս տղին տանում ա ըտի: Թագավերը տենում ա իրան Չիբուխչին ու ասում ա.— Վա՛յ, Չիբուխչի շան, էս վե՞րդի գնացիր, էն խի՞ ուզիր ինձ խեղդիլ, որ ես էլ ուզի քեզ սպանիլ տամ: Տղեն ասում ա.— Չարն ու Բախտը եկել ին կուշտս, յաղուխը գցեցի, ուզեցի Բախտին բռնեմ, ընգավ շլինքդ:

Ասում ա.— Բա խի՞ չի էն վախտը ասիր:

Ասում ա.— Հվատիլ չդիր, նրա հմար վեր բախտս գնացել էր, շարն էր մնացել:

Թագավերը ասում ա.— Չիբուխչի ջան, փլան թագավերը ինձ ասում ա օդում տներ շինի, թե չէ՝ քեզ վրա կռիվ եմ գալի:

Չիբուխչին ասում ա.— Գնա իրեք տարով ժամանակ վե կալ:

էս թագավերը գնում ա իրեք տարով ժամանակ ա վեր ունում, գալիս ա Չիբուխչուն ասում ա.— Վեր եմ կալել:

Չիբուխչին էրկու պուճուր րեխի սվրցնում ա, ասում ա.— Ասացեք քա՛ր, ցե՛խ, քա՛ր, ցե՛խ:

էրկու հատ էլ արծվի ճուտ ա բռնում, սվորցնում ա, օդումը պտիտ են գալի: Մի կաբզինդա ա գործում, էդ արծիվների վրա

արզըցնում, էրեխանց էլ նստացնում միջին ու բրցրացնում օդը ու  
ասում. «Քա՛ր, ցե՛խ, քա՛ր, ցե՛խ»:

Էդա իրեք տարին վեր թմամում ա, էն թագավերի մարդիկը  
գալիս են, ասում.— Հը, պատրաստ ա՞:

Ասում են.— Հա:

Արծիվներին դուրս ա բերում, կարդինգեն դնում վրերնուն,  
ըրեխանցն էլ միջին ու օդ ա բցրցնում, սրանք օդըմը պտտվում են,  
ըրեխեքն էլ միջից կանչում են. «Քա՛ր, ցե՛խ, քա՛ր, ցե՛խ»:

Զիբուխին ասում ա.— Դե քար ու ցեխ տվեք, ուստենին քար  
ու ցեխ են ուզմ, վեր տներ շինեն:

Էն թագավերի մարդիկ հաղթվում են, թող են անում, գնում, էս  
Քագավերը նորից սրան տանում ա պալատ, ավելի մեծ պաշտոնի ա  
դնում, դառնում ա մինիստր:

Բախտը ասում ա.— Տեհա՛ր վենց արի, վեր տրան շինեցի մի-  
նիստր:

